

2021

ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (Սևան, թերակղզու հատված)
Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22 կՎտ
էլեկտրամատակարարում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ "ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ" ՓԲԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (Սևան, թերակղզու հատված) Միշա Ստեփանյանին
պատկանող տարածքի 0.22 կՎտ էլեկտրամատակարարում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ" ՓԲԸ տնօրեն՝

Ա/Ձ Արամ Գալոյան

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	5
1.2	Հապավումներ	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը	9
1.4.1	Գրունտների շերտային բնութագրերը իրենց տվյալներով	11
1.4.2	Օդային զծի անցկացման տեխնիկական բնութագրերը	17
1.4.1	<i>Կադրային ապահովում և շինտեխնիկա.</i>	22
1.4.2	<i>Նյութերի և բնարեսուրսների օգտագործում.</i>	23
1.5	Այլընտրանքային տարբերակներ	23
2.	ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ	24
	ՏԱՐԲԵՐԱԿԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ	24
2.1	Զրոյական տարբերակ (նախատեսվող գործունեության չեղարկում)	24
2.2	Ստորգետնյա էլեկտրամատակարարման տարբերակ	24
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	25
3.1	Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական..... նկարագիրը և լանդշաֆտը	25
3.2	Հատուկ պահպանվող տարածքներ	26
3.3	Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը.....	28
3.4	Զրագրություն	28
3.5	Կլիման և օդերևութաբանական պայմանները.....	29
3.5.1	Ջերմաստիճանը.....	29
3.5.2	Խոնավությունը	29
3.5.3	Մթնոլորտային տեղումները	30
3.5.4	Քամի	30
3.6	Կենսաբազմազանություն.....	32
3.6.1	Բուսական աշխարհ	32
3.7	Կենդանական աշխարհ	35
3.8	Նախատեսվող գործունեության ազդեցությունը անտառային ծածկույթի վրա.....	38
3.9	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը	38
3.10	Պատմամշակութային հուշարձաններ.....	40
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....	40
4.1	Մթնոլորտային արտանետումներ	40
4.2	Մթնոլորտային արտանետումներ	41
4.3	Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների վերլուծությունը և գնահատումը.....	44
4.4	Շրջակա միջավայրի հասցված տնտեսական վնասի գնահատում	45
4.4.1	Մթնոլորտային օդ	45
4.4.2	Հողային ռեսուրսներ.....	47
4.4.3	Զրային ռեսուրսներ	48
4.5	Թափոնների կառավարում	49
4.6	Սոցիալական հնարավոր ազդեցությունները.....	49
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	49
5.1	Ռիսկերի գնահատում	50
5.2	Արտանետումների աղբյուրները.....	50
5.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	50
5.3.1	<i>Մթնոլորտային օդ</i>	50

5.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	51
5.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	51
5.3.4	<i>Կենսաբազմազանություն</i>	51
5.3.5	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	52
5.3.6	<i>Աղմուկ</i>	52
5.3.7	<i>Թափոնների կառավարում</i>	53
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	54
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	57

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.1	Պատվիրատու`	"Հայաստանի Էլեկտրական Ցանցեր" ՓԲԸ
1.2	Ձեռնարկող`	"Հայաստանի Էլեկտրական Ցանցեր" ՓԲԸ
1.3	Ձեռնարկողի իրավաբանական հասցեն`	ՀՀ, ք.Երևան, Արմենակյան փող. 127
1.4	Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն`	ՀՀ, ք.Երևան, Արմենակյան փող. 127
1.5	Նախատեսվող գործունեության վարչական տարածքը`	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (Սևան, թերակղզու հատված)
1.6	Էլեկտրոնային փոստը`	info@ena.am
1.7	Հեռախոսի համարը`	+37410 591227
1.8	Հիմնական գործունեության տեսակը`	Էլեկտրաէներգիայի քաշխում
1.9	Աշխատանքային նախագծի մշակող`	"Վոլիոս" ՓԲԸ, Լիցենզիա № 16534
1.10	ՇՄԱԳ հաշվետվողության մշակող`	Ա/Ձ Արամ Գալոյան

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՕԳ` Օդային գիծ

ԳԵ` Գեներատորային ենթակայան

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍԹԿ` Սահմանային թույլատրելի կոնցետրացիա

ՍԹՄ` Սահմանային թույլատրելի մակարդակ

ԼՏԵ` Լրակազմ տրասֆորմատորային ենթակայան

ԷԷՀ ՏԿ` Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգ

ՊՈԱԿ` Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Նախագծի նպատակն է ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ք. Սևան (Սևան, թերակղզու տարածք) Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22կՎ էլեկտրամատակարարումը:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է "Բ" կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (Սևան, թերակղզու հատված) Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22 կՎտ էլեկտրամատակարարման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին " ՀՀ օրենքի, «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Բուսական աշխարհի մասին (1999),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)
- «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- ՀՀ Կառավարության «ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին» 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության «ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին» 29.01.2010թ. N 72-Ն որոշում,
- «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» ՀՀ Կառավարության 18.01.2007թ. N 205-Ն որոշում
- «Սևան» ազգային պարկ պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպիչության կանոնադրությունները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 30.05.2002թ. N 927-Ն որոշում
- «Սևանա լճի ափամերձ տարածքներում քաղաքաշինական գործունեության կանոնակարգման միջոցառումների մասին» 14.09.2006թ. N1386-Ն որոշում

-<<ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին>> ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը

Սույն նախագիծը կատարված է «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված № 41757111 առ 07.03.2019թ. էլեկտրական ցանցին միացման պատվերի հիման վրա:

Նախատեսվող գործունեությունը պատկանում ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտների՝ I կատեգորիա: ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N596 որոշման համաձայն նմանատիպ փոքրածավալ շինարարական աշխատանքները կարող են իրականացվել կառուցապատողի կողմից առանց նախագծման և շինարարության թույլտվությունների:

ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշման համաձայն նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է առաջին ենթագոտում, որը ներառում է «Սևան» ազգային պարկի լճի ջրային սահմանից մինչև 1905.0 մետր բացարձակ նիշը: Նոր հենարանների տեղադիրքը տատանվում է 1903.5 -1904.5մ բացարձակ նիշերի միջև:

Համաձայն ՀՀ կառավարության 24 սեպտեմբերի 2001թ. «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» թիվ 896 որոշման 2-րդ կետի՝ Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22 կՎտ էլեկտրամատակարարման նախատեսվող գործունեությունը համարվում է ոչ հիմնական շինություն, այսինքն հողի մեջ չունի հիմքեր, չեն պահանջվում թաց շինարարական պրոցեսներ և անհրաժեշտության դեպքում կարող են անջատվել հողից՝ առանց էական վնաս հասցնելու հողի ծածկույթին: Ուստի գործունեությունը չի հակասում ՀՀ կառավարության 18 դեկտեմբերի 2008թ. «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման եվ քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» N 1563-Ն որոշման պահանջներին:

Նախագծի նպատակն է ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (Սևան, թերակղզու տարածք) Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22կՎ էլեկտրամատակարարումը:

Հենարանների համար հարթակներ չի նախատեսվում, հենարանները միականգնակ են, նոր ճանապարհներ չի նախատեսվում, հենարանների տեղադրվելու են գոյություն ունեցող համայնքային ճանապարհի եզրին, հանվող բուսահողի ծավալը կազմում 0.5մ³, բուսահողի պահպանման համար լրացուցիչ պահպանման և կուտակման միջոցառումներ չի նախատեսվում, այն տեղում կօգտագործվի ճանապարհի եզրի բաց տարածքների բարեկարգման նպատակով:

Միշա Ստեփանյանին պատկանող հողատարածքում գործունեություն չի իրականացվելու: Տեղադրվող հենարանների նիշը՝ 1903.5 -1904.5մ ծովի մակարդակից:

Բաժանորդի պահանջվող հզորությունը 10կՎա է:

Տեխնիկական պայմանի համաձայն սպառողին պատկանող տարածքի էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Սևանի թիվ S 7380 ԼՏԵ-ից սնվող «Արտաշ Գրիգորյան» ճյուղավորման 0.4 կՎ ցածր լարման ՕԳՄ-ի վերջնային հենարանից՝ կառուցելով 0.4 կՎ և 0.22 կՎ ՕԳՄ՝ նախապես փոխարինելով տեղակայված 25/10 կՎԱ հզորության ուժային տրանսֆորմատորը 100/10 կՎԱ հզորությամբ:

Նախագծվող 0.4կՎ ՕԳՄ-ի երկարությունը կազմում է 62մ, իսկ բաժանորդի սնուցման 0.22կՎ ՕԳՄ-ի երկարությունը՝ 26մ, որից 10մ օդային հատված, 16մ-ը N°2 հենասյան երկայնքով: Հենարանների տեղադրման խորությունը կազմում է 2.5 մ, հենարանների ընդհանուր երկակությունը 8մ:

Տեղազննման արդյունքում էլ. ցանցը դիտարկում է, որ հետագայում ևս 11 սպառիչների սպառման համակարգը հնարավոր է միացնել նոր կառուցվող գծին:

0.4կՎ լարման ՕԳՄ-ի համար, համաձայն հաշվարկի, ընտրվել է СИП-2 3x35+1x54.6մմ², իսկ 0.22կՎ-ի համար՝ СИП-2 2x16մմ²: Վերջիններս ընտրվել են ըստ թույլատրելի հոսանքի, ստուգվել ըստ լարման անկման և շեղման:

Նախագծում նախատեսվող երկաթբետոնե հենարանները ընտրվել են համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ ՈՌԽ-2607 առ 21.11.2012թ. գրության և ներկայացված են աղյուսակ N°1-ում:

Աղյուսակ N°1

Նախատեսվող 0.4կՎ ե/բ հենարաններ

ՀՀ	Անվանում	Հենարանի տեղադրման խորություն, մ	Հենարանի տիպ	Քա-Նակ (հատ)	Հենարանի N° հատակագծի վրա	Հենարանի գծագրի N°, ըստ տիպային նախագծի
1	2	3	4	5	6	7
1	Միականգնակ խարսխային հենարան	2.5	K	2	1,2	3.407.1-136.04.00
	Ընդամենը			2		

Հենարանների տեղաբաշխումը կատարված է հատակագծի վրա, ելնելով ընտրված հենարանների հաշվարկային հենամեջերից և հաշվի առնելով կադաստրային քարտեզի հողաբաժանումները:

Նախագծվող 0.4կՎ ՕԳՄ-ի СИП-2 3x35+1x54.6մմ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարը սկիզբ է առնում ԼՏԵ 7380-ի 0.4կՎ ցածր լարման ՕԳՄ-ի գոյություն ունեցող N°1՝ ե/բ հենարանից, ապա մոնտաժվում է N°1÷2 նոր տեղադրվող ե/բ հենարաններով: N°2 հենարանից СИП-2 2x16մմ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարերով 0.22կՎ ՕԳՄ-ն ուղիղ թռիչքով ամրանում է բաժանորդի կողմից տեղադրվող մետաղական կանգնակին (տես գլխավոր հատակագիծ):

Նախագծվող 0.4կՎ ուղեգիծը համաձայնեցված է բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ (տես գծագիր N°1):

Բաժանորդի էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառքի համար, նախատեսվում է №2 նոր տեղադրվող ե/բ հենարանի վրա տեղադրել միաֆազ երկսակագնային էլեկտրոնային հաշվիչ, ավտոմատ եռաֆազ և միաֆազ անջատիչներով, մետաղական արկղում, ապահովելով էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնակարգի (ԷՄՕԿ) գլուխ 7 կետ 39-ի պայմանները: Մետաղական արկղը հողանցվում է:

ԷԷՀՎ տեխնիկական կանոնակարգի՝ գլուխ V 32.1 կետի համաձայն ՕԳՄ հաղորդալարերից մինչև բնակեցված և չբնակեցված տեղանքի գետնի մակերևույթը և փողոցների երթևեկելի մասերը հեռավորությունն ուղղաձիգով պետք է լինի ոչ պակաս 5մ, որն ապահովված է նախագծում:

Նախագիծը կատարվում է Մ1:1000 հանույթի վրա:

ՕԳՄ-ի մոնտաժման համար նախատեսվում են M3BA ֆիրմայի արտադրության գծային արմատուրա:

1.4.1 Գրունտների շերտային բնութագրերը իրենց տվյալներով

Ըստ կատարված տեղանքի տեղագնման և ճարտարագիտա-երկրաբանական եզրակացության 0,4կՎ ՕԳ ուղեգծով գրունտները հետևյալն են՝

Շերտ Լեռնային ապարների խիճ, գետաքար կավավազային լցոնումով:


0,0-2,5մ Ծավալային կշիռը 2,3 տ/մ³


Նորմատիվային ճնշումը 300 կՊա

Շինարարական խումբ ըստ СНиП -IV-5-82 Vp (6а)


$p \geq 300$ Օհմ · ս

Գլխավոր հատակագիծ





Քարտեզ-սխեմա, կոորդինատներով



Ուղեգծի տեղակայման հատակագիծ





1.4.2 Օդային զծի անցկացման տեխնիկական բնութագրերը

Աղյուսակ 2. Շինարարական կոնստրուկցիաների անվանացուցակ.

Աշխատանքների ծավալներ								
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1920մ								
Ստեղծում								
Վերակառուցում								+
Հ/Հ	Աշխ-րի և ծախսերի շիֆրեր	Աշխատանքի անվանումը	Քանակ	Կյութեր				
				Անվանումը	Չափ ման միավորը	Միավոր ծախսը	Ընդհանուր ծախսը	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6	7	8	9
0.4կՎ ՕԳՄ-ի շինման առաջին աշխատանքներ								
1	ԳԷԳՇ1-4-60-1 K-8	Ե/բ K տիպի հենարան, խարսխային, PA1500-PA1500, №1	1	Ե/բ կանգնակ CB-105	հատ	1	1	առանց հողային աշխատանքի
				Խարսխային բարձակ CA 2000	հատ	2	2	
				Խարսխային սեղմակ PA 1500	հատ	2	2	
				Ամրացման ժապավեն F20	մ	4	4	
				Ամրակ ժապավենի ամրացման համար B200	հատ	4	4	
				Մալուխային փոկ KR1	հատ	3	3	
2	ԳԷԳՇ1-4-60-1 K-4	Ե/բ K տիպի հենարան, խարսխային, PA1500-PA25x100, №2	1	Ե/բ կանգնակ CB-105	հատ	1	1	առանց հողային աշխատանքի
				Խարսխային բարձակ CA 2000	հատ	1	1	
				Խարսխային սեղմակ PA 1500	հատ	1	1	
				Խարսխային բարձակ CA 25	հատ	1	1	
				Խարսխային սեղմակ PA 25x100	հատ	1	1	
				Ամրացման ժապավեն F20	մ	3	3	
				Ամրակ ժապավենի ամրացման համար B200	հատ	3	3	
				Ճյուղավորման հերմետիկ ծակող սեղմակ OP 95	հատ	2	2	
				Հերմետիկ թասակ CI 25-150	հատ	4	4	
				Մալուխային փոկ KR1	հատ	4	4	
0.4կՎ ՕԳՄ-ի մոնտաժային աշխատանքներ								
1	U8-364-1 0.4/0.4 ՕԳՄ-ՕԳՄ PA1500	Գոյություն ունեցող հենարանից ճյուղավորում՝ 0.4կՎ ՕԳՄ-ից անցում 0.4կՎ ՕԳՄ-ի, №1՝	1	Խարսխային բարձակ CA 2000	հատ	1	1	
				Խարսխային սեղմակ PA 1500	հատ	1	1	
				Ամրացման ժապավեն F20	մ	2	2	
				Ամրակ ժապավենի ամրացման համար B200	հատ	2	2	
				Ճյուղավորման հերմետիկ ծակող սեղմակ OP 95	հատ	4	4	
				Մալուխային փոկ KR1	հատ	3	3	

Մ Ն Տ - Ն Մ Ե Բ - Ն Տ Ա Ր Օ Ջ Ե Շ Է

2188-ԷՍ

Աշխատանքների ծավալներ

1	2	3	4	5	6	7	8	9
2	Ս8-150-4 3x35 օղով	СИП-2 3x35+1x54.6մմ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի մոնտաժում օղով	62	СИП-2 3x35+1x54.6մմ ²	մ	1.02	63.24	Միավոր ծավալը մտրված է 2% ավելացումով
3	Ս8-364-1 ՕՐ95	ՕՐ95 տիպի սեղմանկի մոնտաժ	2	Ճյուղավորման հերմետիկ ծակող սեղմանկ ՕՐ 95	հատ	1	2	
4	Ս8-305-2 0.22 կանգնակ	0.22կՎ ՕԳՄ-ի ամրացում բաժանորդի կողմից տեղադրվող մետաղական կանգնակին	1	Ունիվերսալ կեռ SOT 29.10	հատ	1	1	
				Խարսխային սեղմանկ PA 25x100	հատ	1	1	
				Ամրացման ժապավեն F20	մ	1	1	
				Ամրակ ժապավենի ամրացման համար C20	հատ	2	2	
				Ճյուղավորման հերմետիկ ծակող սեղմանկ ՕՐ645	հատ	2	2	
				Մալուխային փոկ KR1	հատ	2	2	
5	Ս8-150-4 2x16 օղով	СИП-2 2x16մմ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի մոնտաժում օղով	26	СИП-2 2x16մմ ²	մ	1.02	26.52	Միավոր ծավալը մտրված է 2% ավելացումով
6	Ս8-173-1 2x16 հենա- բանով	СИП-2 2x16մմ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի մոնտաժում հենարանի երկայնքով, №2	1	СИП-2 2x16մմ ²	մ	1	1	
7	Ս8-149-1 2x16 անցկա- ցումը խո- ղովակով	СИП-2 2x16մմ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի մոնտաժում հենարանի երկայնքով գոֆրեաձև խողովակում, №2	7	СИП-2 2x16մմ ²	մ	1	7	

Ք
Ն
Տ
-
Ն
Ե
Ե
Ք
Ք
-
Ն
Տ

Կ
Ք
Օ
Ջ
Ե
Շ
Տ

14

2188-էՍ

Աշխատանքների ծավալներ

1	2	3	4	5	6	7	8	9
8	U8-173-1 3x16 հենարանով	СИП-2 3x16+1x25մ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի մոնտաժում հենարանի երկայնքով, №2	1	СИП-2 3x16+1x25մ ²	մ	1	1	
9	U8-149-1 3x16 անցկացումը խողովակով	СИП-2 3x16+1x25մ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի մոնտաժում հենարանի երկայնքով գոֆրեաձև խողովակում, №2	7	СИП-2 3x16+1x25մ ²	մ	1	7	
10	U8-406-4 Ø65 գոֆրեաձև խողովակ հենարանի երկայնքով	Ø65մմ գոֆրեաձև խողովակի ամրացում հենարանի երկայնքով, №2	7	Ø65մմ գոֆրեաձև խողովակ	մ	1	7	
				Ամրացման ժապավեն F20	մ	0.4286	3	
				Ամրակ ժապավենի ամրացման համար C20	հատ	0.4286	3	
11	U8-305-1 ZVZ481	Շարժական հողանցման սեղմակի մոնտաժ	1	Սեղմակ շարժական հողանցման համար ZVZ481	լրակ ազմ	4	4	
Սարքավորումների տեղադրում								
1	U8-572-4 մետաղական արկղ (580x550x146) 1ք-2 տեղ Ե/Բ	2-տեղանոց մետաղական արկղ (580x550x146) միաֆազ հաշվիչի համար, №2	1	2-տեղանոց մետաղական արկղ միաֆազ հաշվիչի համար	հատ	1	1	
				DIN-բեյռա L-300մմ	հատ	1	1	
				Ալյումինե դող 40*4	մ	0.15	0.15	
				Մեկուսիչ SM "бочонок" 25	հատ	2	2	
				Շերտապողպատ 25*4	մ	1	1	
				Խամուլթ X12	հատ	2	2	
U8-403-2 ПВ-3 1x10 կոնստրուկցիայով	ПВ-3 1x10մ ² պղնձե հաղորդալարի մոնտաժում կոնստրուկցիայով			ПВ-3 1x10մ ² պղնձե հաղորդալար	մ	2	2	
U8-153-21	ПВ-3 1x10մ ² պղնձե հաղորդալարի ծայրերի մշակում			ПВ-3 1x10մ ² պղնձե հաղորդալարի ծայրերի մշակում	հատ	12	12	

E N G I N E E R I N G P R O J E C T

Աշխատանքների ծավալներ

1	2	3	4	5	6	7	8	9
	Ս8-169-3	ՊԵ-3 1x10մ ² պղնձե հաղորդալարի ծայրերի միացում		ՊԵ-3 1x10մ ² պղնձե հաղորդալարի ծայրերի միացում	հատ	12	12	
	Ծրագրով	Միաֆազ հաշվիչի մոնտաժում	1	Միաֆազ հաշվիչ	հատ	1	1	
	Ս8-525-2-7 Ա/Ա 63-3բ	Եռաբևեռ ավտոմատ անջատիչի մոնտաժ	1	Եռաբևեռ ավտոմատ անջատիչ 63Ա	հատ	1	1	
	Ս8-525-2-3 Ա/Ա 63-1բ	Միաբևեռ ավտոմատ անջատիչի մոնտաժ	1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 63Ա	հատ	1	1	
2	Ս8-153-21	ՏԻՊ-2 2x16մ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի ծայրերի մշակում	1	ՏԻՊ-2 2x16մ ²	հատ	1	1	
3	Ս8-169-3	ՏԻՊ-2 2x16մ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի ծայրերի միացում	1		հատ	2	2	
4	Ս8-153-21	ՏԻՊ-2 3x16+1x25մ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի ծայրերի մշակում	1	ՏԻՊ-2 3x16+1x25մ ²	հատ	1	1	
5	Ս8-169-3	ՏԻՊ-2 3x16+1x25մ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի ծայրերի միացում	1		հատ	3	3	
6	Ս8-169-4	ՏԻՊ-2 1x25մ ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարի ծայրերի միացում	1		հատ	1	1	
Մետաղական արկղի հողանցում								
1	Ս8-472-2 40x4	Հողանցում հորիզոնական, շերտավոր պողպատից խրամուղում, կտրվածք, 160մմ	12	Հողանցման հաղորդիչ ՇՏ.3 40x4	մ	1	12	

Ք Ն Շ - Ն Ե Բ - Ն Տ
Ք Ր Օ Ջ Ե Կ Դ

Աշխատանքների ծավալներ

1	2	3	4	5	6	7	8	9
2	Ս8-472-7 40x4	Հողանցման հաղորդիչ, բաց, շինարարական հիմնատակերով դրված, շերտավոր պողպատից, կտր, 160քմմ	4	Հողանցման հաղորդիչ Շր.3 40x4	մ	1	4	
3	Ս8-471-1 50x50x5 1.5մ	Հողանցում ուղղաձիգ անկյունային, պողպատից, չափ, 50x50x5մմ, L=1.5մ	4	Հողանցման էլեկտրոդ L50x50x5, L=1.5մ	մ	1.5	6	
Մետաղական արկղի հողանցման հողային աշխատանքներ								
1	Ծրագրով	Հողանցման հողային աշխատանքներ	4	Vp(6ա) շին. խմբի բնահողի քանդում ձեռքով (0.5x0.3x12մ)	մ ³	1.8	1.8	
	Ժ1-970 ետ լիցք ձեռքով			Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	1.8	1.8	
2	Ծրագրով	Էլեկտրոդների տեղադրման հողային աշխատանքներ	4	Vp(6ա) շին. խմբի բնահողի քանդում հորատումով (2մ խորությամբ)	մ	2	8	
0.4կՎ ՕԳ հենարանների տեղադրման հողային աշխատանքներ								
1	Ժ4-131 հորատում 5-րդ կարգ	Հորատում 5-րդ կարգի գրունտում (Օ 350մմ)		Փոստրակի քանդում հորատող մեքենայով	մ	5	5	
2	Ժ1-970 ետ լիցք ձեռքով	Քանդած գրունտի ետ լիցք ձեռքով		Քանդված գրունտի ետ լիցք ձեռքով	մ ³	0.21	0.21	
	Ժ1-1134 հարթեցում ձեռքով	Գրունտի հարթեցում ձեռքով		Ավելորդ գրունտի հարթեցում տեղում ձեռքով	մ ²	2.7	2.7	
Տրանսֆորմատորային ենթակայանի վերակառուցում								
1	Ս8-62-1	100կՎԱ հզորության ուժային տրանսֆորմատորի մոտաժում	1	TMГ-100/10 կՎԱ հզորությամբ, տրանսֆորմատորի տեղադրում (մոնտաժ)	հատ	1	1	
	Ծրագրով			TMГ-100/10 կՎԱ հզորությամբ, տրանսֆորմատոր				
2	Ս8-547-16 BP32Y-35A31220 250U	BP32Y-35A31220 250U բաժանիչի մոնտաժ		BP32Y-35A31220 250U տիպի բաժանիչ	հատ	1	1	
3	Ս8-53-1-14 Ն/S 200/5	Հոսանքի տրանսֆորմատորի մոնտաժ	3	Ցածր լարման հոսանքի տրանսֆորմատոր 200/5U	հատ	1	3	

Ք Ն Շ Ր Ո Ջ Ե Կ Ե Կ

Աշխատանքների ծավալներ								
1	2	3	4	5	6	7	8	9
Ապամոնտաժման աշխատանքներ								
1		Ուժային տրանսֆորմա-տորի ապամոնտա-ժում և վերադարձ պահեստ	1	TM-25/10 ուժային տրանսֆորմատոր	հատ	1	1	
				Վերադարձ պահեստ	կգ	270	270	

1.4.1 Կադրային ապահովում և շինտեխնիկա.

Նախատեսվող աշխատանքներում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 12 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ – 2 մարդ
- Բանվորներ և մեքենավարներ - 10 մարդ

Էլեկտրամատակարարման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 28 օրում:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

- Ավտոկրունկ **Ивановец КС-35715-10**
կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով
- Բեռնատար ինքնաթափ **MA3 5550** կամ նրան համարժեք **KAMA3 5511** և այլն
- Էքսկավատոր **Hyundai 170W**
- Շարժական կոմպրեսոր **ЗИФ - 55 В** ըստ պահանջի
- Էլ.եռակցման սարք **СТН 500** կամ նրան համարժեք
- Չեռքի էլեկտրական գործիքներ
- Չեռքի մեխանիկական գործիքներ

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու նպատակով շինհրապարակը կահավորվելու է ժամանակավոր բիզոուգարանով, հանգստի սենյակով և ավտոմեքենաների անվադողերի լվացման կետով: Տեխնիկական որակի ջրի մատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվող շինանյութը կպահեստավորվի շինհրապարակում, հատուկ նախատեսված վայրում, ծածկի տակ :

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի է մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Գործունեության տարածքում հողային աշխատանքներ կատարվելու են ընդամենը 3 մ² մակերեսի վրա (2 հենարանների համար փոսորակների փորում), այդ պատճառով կարելի է փաստել, որ հողային աշխատանքները շատ փոքրածավալ են: Հողային աշխատանքների ծավալները ներկայացված է աղյուսակ 2-ում:

1.4.2 Լյութերի և բնաբուսանոցի օգտագործում

Բնաբուսանոցից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 10 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 28 օր

$$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 10 \times 0.025) \times 28 = 7.896 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.282 \text{ մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 28

$$U_1 = 500 \times 0.0015 \times 28 = 21 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 28.896 մ³/շին. ժամ:

Խմելու որակի ջուրը կմատակարարվի մասնագիտացված շաղցող ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար տարածքում կտեղադրվի ժամանակավոր բիոզուգարան, որը աշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվի:

1.5 Այլընտրանքային տարբերակներ

Նախատեսվող գործունեության պլանավորման փուլում դիտարկվել են հետևյալ այլընտրանքային տարբերակները՝

1) Ջրոյական տարբերակ, այն է՝ չիրականացնել Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (Սևան, թերակղզու տարածք) Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի ելեկտրամատակարարումը Սևանի թիվ S 7380 ԼՏԵ-ից սնվող «Արտաշ Գրիգորյան» ճյուղավորման 0.4 կՎ ցածր լարման ՕԳՄ-ի վերջնային հենարանից:

2) էլեկտրամատակարարման գծի կառուցումը իրականացնել ստորգետնյա մալուխային եղանակով:

Այլընտրանքային տարբերակների վերլուծությունը, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնավորումը նկարագրված է սույն ՇՄԱԳ հաշվետվության Գլուխ 2-ում:

2. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

2.1 Զրոյական տարբերակ (նախատեսվող գործունեության չեղարկում)

Զրոյական տարբերակի դեպքում աշխատանքային նախագծով նախատեսված գործունեությունը չի իրականացվի: Այս տարբերակը ֆինանսատնտեսական և տեխնիկական իրագործելիության, ինչպես նաև բնապահպանական տեսանկյունից ամենացանկալին է, քանի որ չի պահանջում ֆինանսական լրացուցիչ ներդրումներ և չի հանգեցնում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության առաջացմանը: Սակայն, ՀՀ Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի 26 դեկտեմբերի 2006 թ.-ի N° 358-Ն որոշման համաձայն, "Հայաստանի էլեկտրական Ցանցեր" ՓԲԸ-ն, պարտավոր է ապահովել յուրաքանչյուր սպառողի, այդ թվում նաև Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի էլեկտրամատակարարումը, այսինքն նախատեսվող գործունեության իրագործումը հանդիսանում է օրանսդրական պահանջ:

Մյուս կողմից, աշխատանքային նախագծով նախատեսված օդային գծի կառուցման արդյունքում հնարավորություն կընձեռվի ապահովել էլեկտրամատակարարում ոչ միայն Միշա Ստեփանյանին պատկանող տարածքին, այլ նաև ևս 11 սպառիչների համար: Հետևաբար, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից, նախատեսվող գործունեությունը կունանա դրական ազդեցություն: Հետևաբար, կարելի է փաստել, որ զրոյական տարբերակը անցանկալի է, բացի այդ, "Հայաստանի էլեկտրական Ցանցեր" ՓԲԸ չի կատարի իր կողմից ստանձնած պարտավորությունները:

2.2 Ստորգետնյա էլեկտրամատակարարման տարբերակ

Այլընտրանքային տարբերակներից մեկն է՝ էլեկտրամատակարարման գիծը անցկացնել ստորգետնյա մալուխային եղանակով: Այս տարբերակը ենթադրում է հետևյալ աշխատանքները/միջոցառումները՝

- Մեծածավալ հողային աշխատանքների իրականացում,
- Հանված հողային զանգվածի տեղափոխում և պահում՝ դրա համար հատուկ հատկացված վայրում,
- Շինարարական աշխատանքների ընթացքում մեծածավալ մարդկային ռեսուրսների և շին. տեխնիկայի օգտագործում,
- Շրջակա միջավայրի զգալի աղտոտում:

Այս տարբերակը ֆինանսատնտեսական տեսանկյունից թանկ է, իսկ տեխնիկական իրագործելիության տեսանկյունից բարդ: Կատարվելու են մեծածավալ հողային աշխատանքներ, որի արդյունքում հանված հողի տեղափոխման, պահման և տարածքի հատկացման համար կպահանջվեն զգալի ֆինանսական միջոցներ: Հետևաբար կարելի է փաստել, որ այս տարբերակը նպատակահարմար չէ իրականացնել:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՁԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ


3.1 Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, փոքր Սևանի հյուսիս-արևմտյան ափին՝ Սևանի թերակղզում: Տարածաշրջանի հիմնական բնորոշող տարբերությունը՝ նրա ֆիզիկաաշխարհագրական դիրքն է (թերակղզի) և թերակղզու արևելյան մասում նկատելի բարձունքի առկայությունը՝ ծովի մակերևույթից 1985 մ, իսկ լճի մակերևույթից 97 մ բարձրությամբ: Հարավից և արևելքից այս բարձունքը զառիթափ ընդհատվում է լճում և պաշտպանում է հարավային լճափը հյուսիսային քամիներից: Հյուսիսում բարձունքը չի ընդհատվում, այլ ոչ մեծ լայնությամբ (150-200 մ) շլեյֆով (լճի նախկին հատակը) իջնում է դեպի լիճը: Նախատեսվող գործունեության տարածքին բնորոշ է հիմնականում հարթ ռելիեֆ, գրունտների արագացումը հավասար է 0.2-ից 0.4 g: Թերակղզու ոչ մեծ տարածքի վրա կարելի է հանդիպել լանդշաֆտի տարբեր տեսակներ՝ ավազոտ լճափեր, անտառատնկումներ, նոսր թփուտներ, խոտավետ մարգագետիններ բարձունքի վրա, ինչպես նաև դարափեր, ժայռեր, բեկորակույտեր և այլն, որից յուրաքանչյուրը ունի իր ռեկրեացիոն յուրահատկությունները:

"Սևան" ազգային պարկի տարածքը բաժանվում է հետևյալ տարածքագործառնական գոտիների՝

- Արգելոցային,
- Արգելավայրային,
- Ռեկրեացիոն,
- Տնտեսական:

Տվյալ դեպքում՝ նախատեսվող գործունեության վայրը գտնվում է առաջին ռեկրեացիոն գոտում (տես Նկար 4-ն), որի տարածքը կազմում է 1501 հա, իսկ սահմանի ընդհանուր երկարությունը 119.8 կմ է: Տվյալ ռեկրեացիոն գոտու հյուսիս-արևմտյան ափերը քիչ են կտրտված, մեղմաթեք են, իսկ արևելյան ափերը կտրուկ խորանում են: Այստեղով անցնում է նաև տեկտոնական խզվածքային գոտին:




Նկար 4. Նախատեսվող գործունեության տեղադիրքը "Սևան" ազգային պարկի 1-ին ռեկրեացիոն գոտում

3.2 Հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի վարչական տարածքում, որը տեղակայված է "Սևան" ազգային պարկի սահմաններում: Պարկը գտնվում է հայկական հրաբխային լեռնաշխարհի հյուսիսային մասում, Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22585 հա:

"Սևան" ազգային պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ "Նորաշենի", "Լիճք-Արգիճի", "Գիլի" և "Արտանիշի", որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 7464 հա, որից ցամաքային տարածքը՝ 4289 հա, իսկ ջրայինը՝ 3175 հա, 2 արգելավայրեր՝ "Գավառագետի" և "Գիլի-կաղնուտային ռելիկտային", որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2652 հա, որից ցամաքային տարածքը՝ 2359 հա, իսկ ջրայինը՝ 293 հա: Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտը "Նորաշենի" արգելոցն է: Հեռավորությունը նախատեսվող գործունեության տարածքից ուղիղ գծով մոտ 7 կմ է (տես Նկար 5-ը):



Նկար 5. Լախատեսվող գործունեության և "Լորաշենի" արգելոցի տեղադրությունը

"Լորաշենի" արգելոց

Գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում և զբաղեցնում է 839 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 341 հա, իսկ ջրայինը՝ 498 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 12.7 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 4.1 կմ երկարությամբ և 3.5 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել թռչունների (մասնավորապես հայկական որորի, քանի որ այստեղ բնադրող միակ էնդեմիկ թռչունն է) բնականոն ապրելակերպն ու վերարտադրությունը: Արգելոցի տարածքի ռելիեֆը գրեթե հարթ է և ընկած է լճի ափից մինչև 1916 մետր բարձրությունը: Ափերը կտրտված են: Արգելոցի տարածքում առանձնացվում են երկու կղզյակներ՝ 6.53 հա և 4.07 հա տարածքներով, և երեք լճակներ, համապատասխանաբար՝ 16.7 հա, 2.9 հա և 1.3 հա տարածքներով: Արգելոցի ցամաքային տարածքի արևելյան մասը անտառազուրկ է: Կղզիները քարապատ են: Անտառային տնկարկներից հիմնականում հանդես են գալիս չիչխանի, թեղու և սոճու ծառուտները:

3.3 Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը

Սևանի շրջանը գտնվելով Սևանա լճի հյուսիս-արևմտյան մասում հարում է Արեգունի լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան, Փամբակի լեռնաշղթայի հարավ-արևելյան, Գեղամա լեռնաշղթայի հյուսիսային ծայրամասերը և լճափնյա տարածությունները: Տվյալ դեպքում նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի հարավ-արևելյան մասում: Տարածաշրջանում կան հրաբխային խարամի, բազալտի հանքավայրեր, ֆելզիտի, օբսիդիանի, պեոլիտի, հրակայուն կավի պաշարներ:

Փամբակի լեռնաշղթայի հարավ-արևելյան մասը կազմված է պորֆիրիտներից և տուֆոգեններից, որոնք Սևան քաղաքի շրջանում ծածկված են նորագույն լավային ծածկոցներով: Այդ ապարները մերկանում են խոր ձորերի հովիտներում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, կտրտված հեղեղատներով: Միջին բացարձակ բարձրություններն են՝ 1936 մ: Արձանագրվում է գրունտային ջրերի բարձր մակարդակ, թույլ անկայուն կարբոնատային ավազների առկայություն, մակերեսային հոսքեր: Տարածված են լճային կարբոնատային ավազներ, կավեր, ավազակավեր, խճեր: Սեյսմիկ վտանգի մակարդակը գնահատվում է 0.3 g-ով:

Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով:

Երկրաբանա-հիդրոերկրաբանական և երկրաֆիզիկական տեսանկյունից՝ Սևանի ավազանի տարբեր տեղամասեր ունեն ինքնատիպ երկրաբանական կառուցվածք և դրա հետ կապված տարբեր հիդրոերկրաբանական պայմաններ: Այդ տարբերությունները հիմնականում արտահայտվում են երկրաբանական կառուցվածքով, լիթոլոգիական կազմով, ծագմամբ, նստվածքառաջացման պայմաններով և առանձին տեղամասերի գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով: Դրա շնորհիվ, որոշ տեղամասերում տարածված են միայն գրունտային ջրեր, իսկ այլ տեղամասերում՝ բացի գրունտային ջրերից, տարածված են նաև ացիաթթու զազով հարուստ ճնշումային և հանքային ջրեր:

3.4 Ջրագրություն

Սևանը Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճն է, որի ծավալը 33.2 կմ³ է, մակերեսը՝ 1238 կմ²: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ³), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ³): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ավի շրջագիծը մոտ 230 կմ:

Սևանա լիճ են թափվում 28 գետեր և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան:

Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ², իսկ միջավազանային տարածությունը՝ 696.0 կմ²: Գետերի մեծ մասի առավելագույն ելքերը,

սովորաբար, դիտվում են գարնանային վարարումների ժամանակ: Սակայն կարող են դիտվել նաև ամառ-աշնանային սակավաջուր փուլի ընթացքում, որի պատճառը այս սեզոնում հաճախակի տեղացող տեղատարափ անձրևներն են: Գետերի մեծ մասն ունի լավ արտահայտված սակավաջրության երկու փուլ՝ ամառ-աշնանային և ձմեռային: Սևանա լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրագդանը, որի բնական հոսքը մինչև լճի մակարդակի իջեցումը եղել է 110 մլն.մ³ տարեկան: Ներկայումս այս գետը վերածվել է ջրանցքների և ջրատարների մի համակարգի, որով հոսում է Սևանա լճից ոռոգման նպատակներով վերցվող ջուրը:

3.5 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Սևան թերակղզին իր կլիմայական պայմաններով Սևանի ավազանի հյուսիս և հարավ-արևմտյան մասերի բոլոր միկրոշրջաններից ամենաբարենպաստն է: Սա բացատրվում է ջրային զանգվածի գերակշռությամբ թերակղզու շուրջ, նրա մոտիկությամբ Փամբակի լեռնաշղթայի արևելյան լեռնաճյուղերին: Քանի որ ջրային ավազանը տաքանում է դանդաղ և դանդաղ էլ սառչում, օդի ջերմաստիճանի օրական և տարեկան ամպլիտուդան լճի մակերեսի վրա փոքր է ցամաքի հետ համեմատած, որը արագ տաքանում է և արագ էլ սառչում:

3.5.1 Ջերմաստիճանը

Տարածաշրջանում տարեկան միջին ջերմաստիճանը 4.2°C, ամենատաք ամսվանը 15.7°C (հուլիս-օգոստոս), ամենասառը ամսվանը՝ -8.2°C (հունվար): Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -33°C, իսկ բացարձակ առավելագույնը՝ 32°C:

Աղյուսակ 2. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Յունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Յուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Սևան քաղաք	1937	-8.2	-7.4	-3.3	3.5	8.8	12.1	15.7	15.7	12.2	6.4	0.6	-5.5	4.2	-33	32

3.5.2 Խոնավությունը

Տարածաշրջանում օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրեկան և սեզոնային տատանումների: Միջին խոնավության ցուցանիշները տատանվում են 65-82% միջակայքում:

Տարեկան միջին արժեքը 74%:

Աղյուսակ 3. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												Միջին ամսական ժամը 15-ին		
	ըստ ամիսների											Միջին տարեկան, %			
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր	ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Սևան քաղաք	81	80	77	72	73	72	70	68	65	69	76	82	74	75	53

3.5.3 Մթնոլորտային տեղումները

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակությունը կազմում է 583 մմ: Չյան ծածկույթը ձևավորվում է նոյեմբերի երկրորդ կեսին, իսկ կայուն ձյունածածկը՝ դեկտեմբերի կեսին: Լճի անմիջական ազդեցության հետևանքով, որը համարվում է ջերմության բնական ակումուլյատոր, Սևանի թերակղզում ձյան ծածկույթը քիչ կայուն է:

Աղյուսակ 4. Մթնոլորտային տեղումները, %


Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը												միջին ամսական օրական առավելագույն , մմ			Ձևածածկույթ		
	ըստ ամիսների											Տարեկան	Առավելագույն տառապահարձրությունը, սմ	Տարվա մեջ ձևածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ			
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր					Դեկտեմբեր		
Սևան քաղաք	25	30	40	65	103	79	50	40	37	51	38	25	583	93	136	252		
	21	26	26	52	46	45	43	74	44	59	50	26	74					

3.5.4 Քամի


Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված են Նկար 6-ում:

Քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է ապրիլ ամսին հարավարևմտյան ուղղությամբ և կազմում է 6.3 մ/վ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը գրանցվել է հունվար ամսին և կազմում է 4.2 մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 3.3 մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը (≥ 15 մ/վ) 25-ն է:

Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են Նկար 7-ում: Ինչպես երևում է Նկար 7-ից դիտարկվող տարածքում գերակշռում են արևմտյան ուղղությամբ քամիները: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հունվար ամսին արևմտյան ուղղությամբ և կազմում է 58%:



Նկար 6. Քամու միջին արագությունների բաշխվածությունը



Նկար 7. Քամու ուղղությունների կրկնեցիությունը

3.6 Կենսաբազմազանություն

3.6.1 Բուսական աշխարհ

Սևանի ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են՝ մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռաքարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները:

Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի: Պարկի և դրա պահպանական գոտու տարածքից հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ): Նշված մակրոսկոպիկ սնկերից շուրջ 100 տեսակը ուտելի են, որոնցից առավելապես տարածված են հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկլիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*), կոճղասունկ մարգագետնային (*Marasmius oreades*), շամպինյոն սովորական (*Agaricus campestris*), շամպինյոն դաշտային (*Agaricus arvensis*), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (*Coprinus comatus*), շարքասնկերից (*Tricholomataceae*)՝ կոճղասունկ աշնանային (*Armillaria mellea*), լեպիստա մանուշակագույն ոտիկով (*Lepista personata*), շարքասունկ հողամոխր ագույն (*Tricholoma terreum*): Բացի այդ, հանդիպում են նաև 58 տեսակի մակրոսկոպիկ սնկեր, որոնք ունեն բուժիչ հատկություններ: 24 տեսակի սնկեր թունավոր են: Դրանցից են՝ խոզուկասունկ (*Paxillus involutus*), կեղծ կոճղասունկ (*Hypholoma fasciculare*), ճանճասպան հովազային (*Amanita pantherina*), շամպինյոն դեղնամաշկ (*Agaricus xanthodermus*), գոմաղբասունկ թեփուկավոր (*Coprinus picaceus*), սարդոստայնասնկեր (*Cortinarius*), թելիկասնկեր (*Inocybe*), շարքասնկեր (*Tricholoma*) ցեղերի որոշ տեսակներ և այլն:

Անտառային լանդշաֆտային էկոհամակարգերը տեղաբաշխված են գառիթափ լեռան լանջերին:

Դրանք հիմնականում արևելյան կաղնու (*Quercus macranthera*) և գիհու ոչ մեծ անտառամասեր են՝ արտահայտված առանձին կղզյակներով և փոքրիկ խմբավորումներով: Այդ խմբավորումներն աստիճանաբար փոխարինվում են լեռնաքսերոֆիլ թփուտների: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են գիհու և կաղնու անտառների հիմնական խմբավորումները:

Սևանի տարածաշրջանում առկա են բազմաթիվ դեղաբույսեր, սակայն նախատեսվող գործունեության վայրում առկա է միայն երեք տեսակի դեղաբույս՝ Մատիտեղ ճնճղուկի (*Polygonum aviculare*), Զիվան հսկայական (*Cephalaria gigantea*) և Իշառվույտ դեղատու (*Melilotus officinalis*)՝ տես Նկար 8. Բ):

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները

Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 5-ում, իսկ դրանց լուսանկարները՝ Նկար 8. Ա)-ում1:

Աղյուսակ 5. Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ²
	Հայերեն	Լատիներեն	
1	Մեխակ Գրոսհեյմի	<i>Dianthus grossheimii</i> Schischk	EN
2	Թրաշուշան հայաստանյան	<i>Gladiolus hajastanicus</i> Gabrielian	EN
3	Անողևուցուկ Գրոսհեյմի	<i>Puccinellia grossheimiana</i> V.I.Krecz	EN
4	Արոսենի հայկական	<i>Sorbus hajastana</i> Gabr VU	VU

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սևան ազգային պարկի սահմաններում՝ Սևանա թերակղզու ոչ ափամերձ հատվածում: Թերակղզու այս հատվածը գտնվում է մարդածին երկարամյա ազդեցության տակ և օգտագործվում է որպես հանգստյան գոտի: Բացի այդ, գործունեության տարածքում հողային աշխատանքներ կատարվելու են ընդամենը 3 մ² մակերեսի վրա (2 հենարանների համար փոսորակների փորում): Հետևաբար, կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության արդյունքում Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների վրա ազդեցություն չի դիտվի:



Մեխակ Գրոսհեյմի - Dianthus grossheimii Schischk



Թրաշուշան հայաստանյան - Gladiolus hajastanicus Gabrielian



Անողնուցուկ Գրոսհեյմի - *Puccinellia grossheimiana* V.I.Krecz



Արոսեկի հայկական - *Sorbus hajastana* Gabr

Նկար 8. Ա). Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ 33 Կարմիր գրբում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակների լուսանկարները



Չիվանի սկայական - *Cephalaria gigantea*



Մասիտեղ ճնճուկի - *Polygonum Aviculare*



Իշառվույտ դեղատու - *Melilotus officinalis*

Նկար 8. Բ). Նախատեսվող գործունեության տարածքում առկա դեղաբույսերը

3.7 Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի այս հատվածը ներկայացված է բավականին լայն տարածված հարուստ կենսաբազմազանությամբ: Կենդանիների կարմիրգրքային տեսակները տարածված են հիմնականում պահպանված չխախտված բնական տարածքներում և չինգիլների մոտ:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպում են բազմաթիվ տեսակի թռչուններ: "Սևան" ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում առկա են թռչունների 267 տեսակներ, որոնք պատկանում են ստորև Աղյուսակ 6-ում ներկայացված կարգաբանական խմբերին՝

Աղյուսակ 6. "Սևան" ազգային պարկում հանդիպող թռչունների կարգաբանական խմբերը

1	Սուզակներ (Podicipediformes)	10	Կլուներ (Cuculiformes)
2	Ձկնկուլ (Pelecaniformes)	11	Բու (Strigiformes)
3	Արագիլ, տառեղ, ջրցուլ (Ciconiiformes)	12	Այծկիթ (Caprimulgiformes)
4	Ֆլամինգո (Phoenicopteriformes)	13	Մանգաղաթներ, ծիծեռնակներ (Apodiformes)
5	Գիշատիչներ (Falconiformes)	14	Մեղվակեր, հոպուպ, ալկիոն (Coraciiformes)
6	Սազեր, բադեր, կարապներ (Anseriformes)	15	Փայտփոր, վիզզուկ (Piciformes)
7	Հավազգիներ (Galliformes)	16	Ճնճուկանմաններ, (Passeriformes)
8	Կռուկ, փարփար (Gruiformes)	17	Աղավազգիներ (Columbiformes)
9	Որոր, կոցար, քարադր (Charadriiformes)		

Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող 267 տեսակի թռչուններից 20-ը ներկայումս հազվագյուտ են, սակայն գրանցված չեն Հայաստանի Կարմիր գրքում: Դրանք են՝ մոխրայտ սուզակը, մեծ սուզակը, սպիտակ փոքր տառեղը, մոխրագույնտառեղը, սև ցինը, տափաստանային ճուռակը, փոքր ենթարծիվը, կարմիր բադը, պիրուլը, սովորական սոխակը, փոքր քարադրը, սևուկ կոցարը, սպիտակավիզ կոցարը, գետայինջրածիծառը, ականջավոր բուն, այծկիթը, ճահճային մկնաճուռակը, սովորական կիվիկը, խայտաբղետ փայտփորը, ժայռային ծիծեռնակը: Ընդ որում՝ սև ցինը, սովորական սոխակը և սևուկ կոցարը միգրացվող, սակայն ազգային պարկի տարածքում չբազմացող տեսակներից են:

Պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են փափկամարմինների (Mollusca) 43 տեսակներ, որոնք պատկանում են խխունջներին և լորձնամույրուսկներին, և հողվածոտանիների 639 տեսակներ, որոնք պատկանում են միջատներին: Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեղ (Maculinea nausithous Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում: Հանդիպում նաև սողունների 16, կաթնասունների 44 տեսակներ և այլ :

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված կենդանատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 7-ում, իսկ դրանց որոշների լուսանկարները՝ Նկար 9-ում:

Աղյուսակ 7. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ 33 Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ³
	Հայերեն	Լատիներեն	
1	Լճային խխուկ	Acroloxus lacustris	CR
2	Սպիտակ խխուկ	Gyraulus albus	EN
3	Հարթ խխուկ	Gyraulus laevis	EN
4	Մորեխ հայկական	Gomphocerus armeniacus	VU
5	Սևանյան գևայուկ	Dyschirius sevanensis Khnzorian	EN
6	Թամբակուրծք թարախահան	Mylabris sedilithorax Sumakov	EN
7	Մոխրագույն մողու	Anthophora cinerea Frieze	VU
8	Ամրակազմ մեղու	Anthophora robusta Klug	VU
9	Իշամեղու ձևափայլ	Bombus niveatus Kriechbaumer	VU
10	Պորչինսկու իշամեղու	Bombus portshinskii Radoszkowsky	VU
11	Իշամեղու դաղեստանյան	Bombus daghestanicus Radoszkowsky	VU
12	Գիշանգղ	Neophron percnopterus Linnaeus	EN
13	Տափաստանային արծիվ	Aquila nipalensis orientalis Hodgson	VU
14	Ավազանաբազե	Falco columbarius Linnaeus	DD
15	Սապսան	Falco peregrinus Tunstall	VU
16	Կոցար կաչաղակ	Haematopus ostralegus Linnaeus	VU
17	Սպիտակապտ ջրածիծառ	Chlidonias hybrida	VU
18	Ներկարար	Coracias garrulus	VU

³ CR (*Critically Endangered*) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ,
 EN (*Endangered*) - վտանգված տեսակ,
 VU (*Vulnerable*) - խոցելի տեսակ,
 DD (*Data Deficient*) - տվյալների անբավարարություն և այլն



Ամրակազմ մեղու - *Anthophora robusta* Klug



Սպիտակաայտ ջրածիճառ - *Chlidonias hybrida*



Ներկարար - *Coracias garrulus*



Ավազանարագե - *Falco columbarius* Linnaeus



Մորեխ հայկական - *Gomphocerus armeniacus*



Սպիտակ խխուկ - *Gyraulus albus*



Կոցար կաչաղակ - *Haematopus ostralegus* Linnaeus



Գիշանգղ - *Neophron percnopterus* Linnaeus

Նկար 9. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող` ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող կենդանատեսակների որոշների լուսանկարները

3.8 Նախատեսվող գործունեության ազդեցությունը անտառային ծածկույթի վրա

Աշխատանքային նախագծի համաձայն Սևան համայնքում (թերակղզու ոչ ավիամերձ հատվածքում) կառուցվելու է էլեկտրամատակարարման օղային գիծ:

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է "Սևան Ազգային Պարկ" ՊՈԱԿ-ի տարածքում:

Աշխատանքների իրականացման ընթացքում օղային գծի ուրվագծով ծառահատումներ իրականացնելու անհրաժեշտություն չի առաջանա, քանի որ օղային գծի անցկացման համար օգտագործվելու են ինքնակիր մեկուսացված հաղորդալարեր (ԻՄՀ), որոնք մեկուսիչ թաղանթով և բարձր անվտանգությամբ օժտված հաղորդալարեր են և հիմնականում օգտագործվում են բնակելի և անտառապատ գոտիներում օղային գծերի անցկացման համար:

3.9 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը

Սևան համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագրության համար հիմք են հանդիսացել համայնքի ավագանու կողմից 26.12.2016թ.-ին ընդունված "Սևան համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագիր" թիվ 11-Ն որոշումը և ՀՀ կառավարության կողմից 09.08.2007թ.-ին ընդունված "Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին" թիվ 1033-Ն որոշումը:

Սևան

Մակերեսը՝ 1775.7 հա,

Բնակչությունը՝ 24060 մարդ:

Հեռավորությունը մարզկենտրոն Գավառից՝ 35 կմ,

Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 65 կմ,

Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1925 մ:

Իր աշխարհագրական դիրքով Սևանը Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է: Այն գտնվում է Արեգունի, Փամփակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում: Համայնքն իր ավիամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է: Այն առանձնանում է ջրային ռեսուրսներով, բնապահպանական և մշակութային հուշարձաններով:

Հայաստանի վարչատարածքային բաժանմամբ՝ Սևանը համայնքը իր մեջ ներառում է Սևան քաղաքը, Ցամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը և Գագարին բնակավայրը: Ստորև Նկար 10-ում պարկերված է նախատեսվող գործունեության վայրի և մոտակա բնակելի թաղամասի՝ Ցամաքաբերդի միջև ընկած հեռավորությունը:



Նկար 10. Նախատեսվող գործունեության հեռավորությունը հարակից վայրերից և դրանց տեղադիրքը

Համայնքային ունի՝ Հովհ. Այվազովսկու անվան արվեստի, երաժշտական դպրոցների, Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց, Վ. Ստեփանյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ (7 գրադարան), մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, համայնքային մշակութային կենտրոն: Համայնքում գործում են 6 հիմնական և 1 ավագ դպրոց, արհեստագործական ուսումնարան, քոլեջ, բժշկական ուսումնարան: Սևանում է գտնվում "Սևան ազգային պարկ" ՊՈԱԿ-ը, որի բնագիտական թանգարանն էլ Սևանա լճի, տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի, ժողովրդագրության, ավանդույթների ամբողջական ցուցանմուշների և ցուցադրությունների եզակի վայր է:

Սևան համայնքը հանդիսանում է ՀՀ-ում կարևորագույն զբոսաշրջային կենտրոններից մեկը:

"Սևան-Գրենոբլ" քույր քաղաքների համագործակցության շնորհիվ համայնքում զարգանում են զբոսաշրջային, կրթական և առողջապահական ոլորտները՝ ամրապնդելով հայ-ֆրանսիական բարեկամությունը գործնական ծրագրերի տեսքով: Մեկամյա կենսագրություն ունեն Սևանի և Լեհաստանի Բրոդնիցա քաղաքի համագործակցությունը: Համագործակցության ոլորտներն են՝ տեղական ինքնակառավարման մարմինների միջև փորձի, տեղեկատվության փոխանակում, համագործակցություն կրթության, մշակույթի, սպորտի բնագավառներում, զբոսաշրջության, երիտասարդների փոխանակման ծրագրերի իրականացում: Վերջին տարիների ընթացքում համայնքում միջազգային և տեղական կազմակերպությունների և համայնքային ներդրումների միջոցով իրականացվել են մի շարք ծրագրեր: Սևանում լույս են տեսնում "Սևան" թերթը, "Ափ" ամսագիրը, գործում է "Գեղամա" հեռուստաընկերությունը: Համայնքում գործունեություն են իրականացնում մի շարք հասարակական կազմակերպություններ, ասոցիացիաներ, հիմնադրամներ:

Նախատեսվող գործունեության վայրից 170 մ հեռավորության վրա գտնվում է Մ-4 Երևան-Սևան միջպետական նշանակության ավտոճանապարհը (Նկար 10), որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհային ցանցի կարևորագույն հատվածներից մեկը:

3.10 Պատմամշակութային հուշարձաններ

Տարածաշրջանը հարուստ է պատմամշակութային, հնագիտական և բնական հուշարձաններով, որոնք խթան են հանդիսանում զբոսաշրջության կազմակերպման լավագույն բարենպաստ պայմանների ստեղծման համար:

ՀՀ կառավարության 2003 թ.-ի հունվարի 9-ի "ՀՀ Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակը հաստատելու մասին" №80-Ն որոշման համաձայն Սևան քաղաքային համայնքի վարչական սահմաններում առկա են 18 պատմամշակութային օբյեկտներ, որոնցից նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ և ամենաարժեքավորն է Սևանի վանական համալիրը՝ Սևանավանքը, որն գտնվում է մոտ 1 կմ հեռավորության վրա (տես Նկար 10-ը):

Սևանավանքը հիմնադրել է Գրիգոր Ա Լուսավորիչը 305 թ.-ին: Կղզին բերդապարիսպով ամրացված է եղել դեռևս բրոնզի դարում: Դեպի հարավ-արևելք, ոչ հեռու գտնվող Աստվածածին եկեղեցին ունի նույն եռաբսիդ հորինվածքը: Արևմտյան կողմում կցվել է գավիթ, որը հնագույններից է (կանգուն էր մինչև 1930-ական թթ.): Համալիրի տարածքում կան բազմաթիվ խաչքարեր: 1956-57 թթ.-ին եկեղեցիները վերանորոգվել են:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել բոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի զուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության վրա:

4.1 Մթնոլորտային արտանետումներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են.

- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների աշխատանքից առաջացող գազանման արտանետումները,

- հողային/փորման և ճանապարհների հարթեցման աշխատանքներից և շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին:

Շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները, որոնք պլանավորվում է օգտագործել գործունեության իրականացման ժամանակ, հանդիսանում են չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրները:

4.2 Մթնոլորտային արտանետումներ

ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը

Հաշվարկները կատարված են գործող մեթոդակարգի համաձայն :

$$Q = (P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times G \times 106 \times B \times P6) / 3600 \text{ տ/ժամ, որտեղ (1)}$$

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0.05

P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02 P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0

P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.2

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.6

G վերամշակվող գրունտի քանակը, 17 մ³: Հողային աշխատանքների տևողությունը ըստ աշխատանքային նախագծի ժամանակացույցի կազմում է 7 օր 7 օր x 8 ժամ/օր = 56 ժամ/շին

G - 17 մ³ : 56 ժամ = 0.3 մ³ /ժամ կամ հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ 0.3 մ³ /ժամ x 2.7 տ/մ³ = 0.81 տ/ժամ

$$Q = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.2 \times 0.5 \times 0.81 \times 10^6 \times 0.6 \times 1.0) / 3600 = 0.0135 \text{ գ/վրկ}$$

$$0.0135 \text{ գ/վրկ} \times 56 \text{ ժամ} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 1000000 = 0.0027 \text{ տ/շին. ժամանակահատված}$$

բ) Փոշու արտանետումների հաշվարկը շինարարական տեխնիկայի աշխատանքի դեպքում

Շինարարական տեխնիկայի աշխատանքների ընթացքում իրականացվում է տեղանքի հարթեցում, հանվող հողային զանգվածի և առաջացած թափոնների տեղափոխում ավտոինքնաթափ մեքենաներով: Հաշվի են առնվում շինարարական հարթակում անընդհատ աշխատող տեխնիկայից առաջացած արտանետումները:

Տրանսպորտի շարժման ժամանակ մթնոլորտ է արտանետվում փոշի: Տրանսպորտի շարժը տեղի է ունենում ամբողջ շինարարության ընթացքում՝ 7 օր կամ 56 ժամ:

Մթնոլորտ արտանետվող փոշու քանակը որոշվում է նշված մեթոդակարգի համաձայն /3/:

$$Q_{\text{մթ.}} = (C_1 \times C_2 \times C_3 \times N \times L \times q_1 \times C_6 \times C_7) / 3600 + C_4 \times C_5 \times C_6 \times q_2 \times F_0 \times n$$

բանաձևով, որտեղ՝

C_1 – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունանկությունը, $C_1 = 1.0$

C_2 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը, $C_2 = 1.0$

C_3 - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը, $C_3 = 0.1$

N – ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում, $N = 1$

L – մի վազքի միջին երկարությունն է, կմ $L = 0.05$ կմ

C_4 - գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմայի վրա նյութի մակերևույթի պրոֆիլը, C_4 – ը տատանվում է 1.3 – 1.6-ի սահմաններում $C_4 = 1.3$

F_0 –պլատֆորմայի միջին մակերեսն է , $F_0 = 12$

C_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը, $C_5 = 1.0$

C_6 - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը $C_6 = 0.2$

C_7 - գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը, ընդունում ենք՝ $C_7 = 0.01$

q_1 – 1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ $q_1 = 1450$ գ

q_2 – նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները, գ/մ² վրկ $q_2 = 0.002$

n – ավտոմեքենաների թիվն է $n = 3$

$$Q_{\text{մթ.}} = (1 \times 1 \times 0.1 \times 1 \times 0.05 \times 1450 \times 0.2 \times 0.01) / 3600 + 1.3 \times 1.0 \times 0.2 \times 0.002 \times 12 \times 3 = 0.019 \text{ գ/վրկ}$$

$$Q_{\text{մթ.}} = (0.019 \times 56 \times 3600) / 10^6 = 0.0038 \text{ տ/շին. ժամանակահատված}$$

գ) Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները

Մթնոլորտային օդը աղտոտվում է ժանր տեխնիկայի աշխատանքի ընթացքում՝ դիզելային վառելիքի այրման հետևանքով առաջացած արտանետումներով, որոնք

հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված <<Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման>> մեթոդական հրահանգի հիման վրա: Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները (բացառությամբ ծծմբային անհիդրիդի) բերված են ստորև:

Աղյուսակ 5. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑOU	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները, կախված ավտոմոբիլային պարկի միջին տարիքից և տեխնիկական վիճակից, բերված են ստորև աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները

Ավտոմեքենաների կատեգորիան	Վնասակար նյութը	Ազդեցության գործակիցը	
		պարկի միջին տարիքը	տեխնիկական վիճակը
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	1.33	1.8
	CH	1.2	2.0
	NO _x	1.0	1.0
	CO ₂	1.0	1.0
	N ₂ O	1.0	1.0

Ածխածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (CH), ազոտի օքսիդների (NO_x) գործակիցները վերցված են <<Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից>> (Մոսկվա, Հիդրոմետհրատ - 1983), իսկ ածխածնի երկօքսիդի (CO₂) և ազոտի երկօքսիդի (N₂O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ որևէ այլ մեծություններ դրանց համար չեն առաջարկվում:

Ընդամենը շինարարության ընթացքում անընդհատ շահագործվելու են 3 հատ տեխնիկական միջոց, որոնք օգտագործում են դիզելային վառելիք: Դիզելավառելիքի միջին օրական ծախսը կկազմի՝ 60 և, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $60 \times 0.835 = 50.1$ կգ/օր: Ծանր տեխնիկայի և բեռնատար մեքենաների աշխատանքը կիրականացվի ամբողջ շինարարության ընթացքում:

Աղյուսակ 7. Վնասակար նյութերի արտանետումները

Ավտոմեքենաների կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումներ, գ/կգ	Արտանետումներ,	
			տ/շին. ժամ.	գ/վրկ
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	87.14	0.03	0.152
	CH	0.58	0.0002	0.001
	NO _x	42.3	0.015	0.074
	N ₂ O	0.122	0.00002	0.00012
	ՑՕՄ	8.16	0.0028	0.014
	ՊՄ	4.3	0.0014	0.007

Ծծմբային անհիդրիդ

(SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի:

Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2\Sigma ksb, \text{ որտեղ`}$$

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.003 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 50.1 տ/շին. ժամ

$$SO_2 = 2 \times 50.1 \times 0.003 = 0.3 \text{ տ/տարի կամ } 1.48 \text{ գ/վրկ:}$$

4.3 Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների վերլուծությունը և գնահատումը

Հաշվարկների արդյունքները, ամփոփված ըստ յուրաքանչյուր վնասակար նյութի արտանետման, բերված են Աղյուսակ 8-ում: Աղյուսակ 8-ում միավորված են ազոտի երկօքսիդը և ազոտի օքսիդները, ցնդող օրգանական միացությունները ու ածխաջրածինները:

Աղյուսակ 8. Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը գործունեության ժամանակահատվածում

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ (տ/շին. ժամանակահատված)					
	Փոշի	CO	NO _x + N ₂ O (այսուհետ NO _x)	CH+ՑՕՄ (այսուհետ CH)	ՊՄ	ՏՕ ₂
1	2	5	6	8	9	10
1. Փորման-բեռնման աշխատանքներ	0.0135 (0.0027)	-	-	-	-	-
2. Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	0.019 (0.0038)	-	-	-	-	-
3. Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումներ	-	0.152 (0.3)	0.074 (0.015)	0.015 (0.003)	0.007 (0.0014)	1.48 (0.3)
ԸՆԴԱՄԵՆԸ	0.0325 (0.0065)	0.152 (0.3)	0.074 (0.015)	0.015 (0.003)	0.007 (0.0014)	1.48 (0.3)

4.4 Շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի գնահատում

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է՝ արտահայտված դրամական համարժեքով: Տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային ցուցանիշներով գնահատելու համար:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

4.4.1 Մթնոլորտային օդ

Սույն մեթոդակարգը մշակված է այն նյութերի ազդեցության գնահատման համար, որոնց սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նորմատիվները գերազանցել են, սակայն հաշվի առնելով, որ նախկին բոլոր մեթոդակարգերը ՀՀ կողմից ներկայացված չեն և չեն գործում, վնասի հաշվարկը կատարված է վերը նշված մեթոդակարգով:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum C_q \Phi_g \sum V_i R_i \quad (1),$$

որտեղ`

U –ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

τ_q –ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9 աղյուսակի վարելահողերի տարածքի համար, որի շարքին դասվում է տարածքը շինարարության իրականացման ընթացքում, ընդունվում 0.25:

φ_i –ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, ածխածնի օքսիդի համար ընդունվում է 1, ազոտի երկօքսիդի համար` 12.5, անօրգանական փոշուծ, եռակցման աերոզոլի համար` 25, ծծմբի անհիդրիդի համար` 16.5, ածխաջրածինների համար` 3, պինդ մասնիկների համար` 25, մանգանի օքսիդների համար` 705:

Φ_i –ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φ_g –ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է `ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից:

Սույն կարգի համաձայն

$\Phi_g = 1000$ դրամ:

Φ_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով`

$$\Phi_i = q (3 S_{U_i} - 2 U_{\theta} U_i), S_{U_i} > U_{\theta} U_i \quad (2)$$

որտեղ`

$U_{\theta} U_i$ –ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է` տոննաներով: հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք մերձգետնայ կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում, փաստացի արտանետումները ընդունվում են որպես $U_{\theta} U_i$:

S_{U_i} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են` տոննաներով

$q = 1$ ` անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ` շարժական աղբյուրների համար

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային ծավալային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Անշարժ աղբյուրների համար

Անորգանական փոշի` 0.0065 տ/շին. ժամ

$$U_1 = 0.25 \times 1000 \times 25 \times (3 \times 0.0065 - 2 \times 0.0065) = 40.6 \text{ դրամ}$$

Շարժական աղբյուրների համար

Ազոտի օքսիդներ ` 0.3 տ/շին. ժամ

$$U_7 = 3 \times 0.25 \times 1000 \times 12.5 \times (3 \times 0.3 - 2 \times 0.3) = 2812 \text{ դրամ}$$

Ածխածնի օքսիդ ` 0.015 տ/շին. ժամ

$$U_8 = 3 \times 0.25 \times 1000 \times 1 \times (3 \times 0.015 - 2 \times 0.015) = 11.25 \text{ դրամ}$$

Ածխաջրածիններ ` 0.003 տ/շին. ժամ

$$U_9 = 3 \times 0.25 \times 1000 \times 3 \times (3 \times 0.003 - 2 \times 0.003) = 6.75 \text{ դրամ}$$

Պինդ մասնիկներ ` 0.0014 տ/շին. ժամ

$$U_{10} = 3 \times 0.25 \times 1000 \times 25 \times (3 \times 0.0014 - 2 \times 0.0014) = 1.05 \text{ դրամ}$$

Ծծմբային անհիդրիդ ` 0.3 տ/շին. ժամ

$$U_{11} = 3 \times 0.25 \times 1000 \times 16.5 \times (3 \times 0.3 - 2 \times 0.3) = 3712 \text{ դրամ}$$

$U=40.6+2812+11.25 +6.75+1.05 +3712=6583.65$ դրամ/շին. ժամ:

Ներկայացված գումարը արտահայտում է վնասակար նյութերի հետևանքով տնտեսությանը հասցված հարաբերական (բերված) վնասի դրամային արտահայտությունը:

4.4.2 Հողային ռեսուրսներ

Էլեկտրամատակարարման օդային գծի հենասյուների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի մակերեսը կկազմի 3 մ²:

Հետևաբար, կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կազդվի "Սևան" ազգային պարկի մոտ 3 մ² հողատարածք:

Հողային ռեսուրսներին հասցվող վնասի հաշվարկները կատարվել են համաձայն ՀՀ Կառավարության 25.01.2005 թ.-ի թիվ 92-Ն "Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին", ինչպես նաև ՀՀ Կառավարության 24.12.2003 թ.-ի թիվ 1746-Ն "Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին" որոշումների:

"Սևան" ազգային պարկի հողերի կադաստրային արժեքը հաշվարկվում է [3] մեթոդակարգի համաձայն՝ հետևյալ բանաձևով.

$$ԿԳհող = Աբազա \cdot Մհող \cdot Գգ, \text{ դրամ}$$

Որտեղ՝

ԿԳհող – գնահատվող հողամասի կադաստրային գինն է՝ արտահայտված դրամով,

Աբազա – բնակավայրերի հողերի 1 մ² մակերեսի բազային արժեքն է՝ արտահայտված դրամով, հավասար է 60000 դրամ,

Մհող – գնահատվող հողամասի մակերեսն է՝ հավասար է 3 մ²,

Գգ – բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցն է, Չկալովկա համայնքի տվյալ հատվածի համար հավասար է 0.0057 (տես [3]-ի Հավելված 2-ը):

ԿԳհող = 3 · 60000 · 0.0057 = 1026 դրամ

Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկը իրականացվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա = ԾՀՎ \cdot ԱՎՀ \cdot ԾՈւՎ, \text{ դրամ}$$

Որտեղ՝

Ա – ազդեցությունն է,

ԾՀՎ – վնասված հողամասը նախնական (նորմատիվային) տեսքի բերելու (պահանջների վերականգնման) համար անհրաժեշտ ծախսերն են (բուսահողի կտրման, տեղափոխման, պահեստավորման, պահպանման և վերջնական վերականգնման միջոցառումների տեսակարար ծախսերը հաշվարկված 1 մ² համար կազմում են 3200 դրամ),

ԱՎՀ – վնասված հողամասի (գույքի) արժեքն է, տվյալ դեպքում հավասար է ԿԳհող,

ԾՈւՎ – ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են (տվյալ դեպքում անտեսվում է, քանի որ կատարված է ընդհանուր նախագծային աշխատանքների կազմում, առանց առանձին տողով նշելու):

Ա = ԾՀՎ + ԱՎՀ, դրամ:

Այսպիսով՝

ԱՎՀ = 3 · 3200 + 1026 = 10626 դրամ:

4.4.3 Ջրային ռեսուրսներ

Աշխատանքների ժամանակ աղտոտված կեղտաջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ չի իրականացվում, համապատասխանաբար ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում:

Ընդամենը նախատեսվող աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային արտահայտմամբ կկազմի՝

6584 + 10626 = 17210 դրամ:

4.5 Թափոնների կառավարում

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 09 5	17 մ ³
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	0.05 տ

Հողային աշխատանքների արդյունքում առաջացած հողային զանգվածը օգտագործվելու է հետլիծքի և տարածքի հարթեցման համար:

Առաջացած կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով մասնագիտացված ընկերության կողմից կտեղափոխվի տարածքային աղբավայր:

4.6 Սոցիալական հնարավոր ազդեցությունները

Աշխատանքային նախագծով նախատեսված օդային զծի կառուցման արդյունքում հնարավորություն կընձեռվի ապահովել էլեկտրամատակարարում ոչ միայն Միշա Ստեփանյանին պատկանող տարածքին, այլ նաև ևս 11 սպառիչների համար: Հետևաբար, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից, նախատեսվող գործունեությունը կունանա դրական ազդեցություն:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել 45հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

Գործունեության իրականացման ընթացքում /շինարարության փուլ/ միջոցառումների կատարման վերահսկողությունն իրականացվելու է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից:

5.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

5.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հողային աշխատանքների իրականացման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

5.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

5.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,

- պարբերապես ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:

5.3.2 Ջրային ռեսուրսներ

Գործունեության իրականացման ընթացքում առաջնորդվել «ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի N 57 որոշման դրույթներով, բացառելով Սեվանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի կիրառումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

5.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա
- Շինարարական աշխատանքների ընթացքում հանվող բնահողը համաձայն աշխատանքային նախագծի օգտագործվելու է որպես ետլիցք:
- շինարարական նյութերի և քսայուղերի պահեստները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի:

5.3.4 Կենսաբազմազանություն

Աշխատանքային նախագծով՝ կառուցվող էլեկտրամատակարարման օղային գիծը նախատեսվում է կառուցել ք. Սևան, թերակղզու հատվածում՝ վերգետնյա եղանակով:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է:

Ըստ նախնական գնահատումների նշված տարածքում թե կենդանական, և թե բուսական աշխարհի ներկայացուցիչների վրա ազդեցություն չի լինելու: Այդ իսկ պատճառով լրացուցիչ կենսաբազմազանության մշտադիտարկումներ չի նախատեսվում:

5.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ գնահատման հաշվետվության, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

5.3.6 Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

5.3.7 Թափոնների կառավարում

Օդային գծի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը
- Նվազագույնի հասցնել շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը, բացառել տարածքում թափոնների բաց այրումը

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինտեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում (b) Շինանյութերի և գրունտի ծածկում անթափանց թաղանթներով (c) Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում աշխատանքների դադարում (d) Տեղանքում թափոնների և այլ նյութերի այրման արգելում
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն քանդման շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարական անձնակազմը կօգտվի շինհրապարակում նախատեսված ժամանակավոր բիոզուգարանից</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից

		<p>տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
--	--	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս, գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> - Հանված հողերը պահեստավորում են թույլատրված վայրում - Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում 	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

	ընկերությանը պատկանող տարածքի բարեկարգման նպատակով				
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. ՀՀ Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն որոշմամբ հաստատված "Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները":
4. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
5. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
6. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
7. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
8. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
9. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
10. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
11. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
12. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
13. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ԷԼԵԿՏՐԱՄԱՍՈՒԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ - ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՏՎԵՐ

1.	Նույնացման կոդ	41757111	Ամսաթիվ 07/03/2019			
2.	Ցանց	ՄԵՎԱՆ	Մասնաճյուղ	«ԳԵՂԱՄԱ» ՄԱՍՆԱՃՑՈՒՂ		
3.	Պատվիրատուի տվյալներ Հեռախոս +37494777787	Կարգավիճակ	Բնակիչ			
		Անվանում	Միշա Ստեփանյան			
		Անձնագիր	AG0652244.050 3/23/2006			
		Մոց. քարտ				
		Ղեկավար				
4.	Էլեկտրասնուցման տարածքի հասցեն		ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ , ք.ՄԵՎԱՆ, (Մեան, Թերակղզու տարածք, հողամաս, անտառածածկ տարածք)			
5.	Միացման տեսակ	Միաֆազ	6.	Համայնք		
7.	Պահանջվող հզորություն (ԿՎԱ)	14	8.	Մեուցման տեսակ	Հիմնական սնուցում	
9.	Լարման մակարդակ (ԿՎ)	0.22	10.	Միացման ամսաթիվ		
11.	Էլեկտրամատակարարման իրականացման տեխնիկական պայմանների առաջարկ					
<p>1. նախապես փոխարինել տեղակայված 25/10 ԿՎԱ հզորության ուժային տրանսֆորմատորը 100/10 ԿՎԱ-ով: Սնուցումը իրականացնել Մեանի թիվ S7380 ԼՏԵ-ից սև լող <<Արտաշ Գրիգորյան>> ճյուղավորման 0.4ԿՎ ՕՄԳ ի վերջնային հենարանից, կառուցելով 0.22ԿՎ ՕՄԳ մինչև սպառիչի կանգնակ: Հաշվառքի սարքերը տեղադրել 0.22ԿՎ ճյուղավորման հենարանի վրա առանձին արկղի մեջ: Անվտանգության գոտու խախտում չկա: Տարածքը գտնվում է Մեան քաղաքի բնակավայրի սահմաններից դուրս:</p> <p>Անհրաժեշտ փաստաթղթերը ստուգեց և պատվերն ընդունեց _____ / _____ /</p> <p>Տեխնիկական պայմանների առաջարկին համաձայն եմ, ծանոթ եմ "տր սպառողի" կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման կարգին, որի համար ստորագրում եմ _____ / Միշա Ստեփանյան /</p> <p>Ծանցի տես  _____ /</p>						
12.	Էլեկտրասնուցման վերակառուցվող գծի գույքահամար և անվանում					
13.	Էլեկտրասնուցման կառուցվող գծին տրվող					
	Գույքահամար	Անվանում	Տեսակ	Կապակցող խմբի կոդ	Հասցե	Ն/Ձ

«ԳԵՂԱՄԱ» ՄԱՍՆԱՃՑՈՒՂ _____ /2. ՄԱՆՈՒԿՅԱՆ/

Հաստատել մասնաճյուղի կողմից ներկայացված տեխնիկական պայմանի առաջարկը _____ / _____ /

Պատվիրել անհրաժեշտ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը _____

Մերժել ներկայացված առաջարկը _____

Մերժման պատճառները _____

Ներկայացնել նոր առաջարկ _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ» ՓԲԸ _____ /3. ԳՐԻԳՈՐՅԱՆ/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևանհամայնք, ք. Սևան, Նաիրյանի. 164, 1501
Հեռ. (0261) 4-00-01, (0261) 2-43-23
Կայք sevancity.am
Էլ. փոստ sevan.gegharqunik@mta.gov.am

16 հունիսի 2020թ.

N_քղ 1/255__

«ՀԷՑ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Ի լրումն Սևան համայնքի ղեկավարի՝ 26.09.2019թ. Քպ 1/419 գրության՝ հայտնում ենք, որ «ՀԷՑ» ՓԲԸ լիազոր անձ Ա. Գալոյանի կողմից 05.06.2020թ. էլեկտրոնային եղանակով Սևանի համայնքապետարան է ներկայացվել քաղ. Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22 կվ էլեկտրամատակարարման օդային գծի ուղեգիծը, որը համաձայնեցված է եղել «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ:

Տեղեկացնում ենք, որ Սևանի համայնքապետարանը ներկայացված ուղեգծի վերաբերյալ առարկություններ չունի:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MURADYAN SARGIS 3402840316

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատ.ճարտ-շին. բաժին
Հեռ. 0261 4-00-07

«Գայաստանի
էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
Գործադարության բաժին
02/ 06-150, 17-06 20 20



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Լաիրյան փ. 164, 1501
Հեռ. (0261) 4-00-00, (0261) 2-43-23
Կայք sevancity.am
Էլ. փոստ sevan.gegharquniq@mta.gov.am

26 սեպտեմբերի 2019թ.

N ԲԿ Ը / 1419

«ՀԷՑ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Ս/թ սեպտեմբերի 19-ին Սևանի համայնքապետարանում տեղի է ունեցել ք. Սևան /թերակղզու տարածք/, Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի՝ 0.22 ԿՎՏ էլեկտրամատակարարման աշխատանքների նախագծի՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկման առաջին փուլը:

Հանրային քննարկման ընթացքում համայնքապետարանի ներկայացուցիչների կողմից կատարվել են առաջարկներ, մասնավորապես՝ ներկայացված նախագիծը համապատասխանեցնել ՀՀ կառավարության՝ 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման պահանջներին և այն համաձայնեցնել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կառ.՝ Հարս.՝ 2-ին բաժին
Հեռ.՝ 0261-4-00-07

« Գ յ ա յ ա ս տ ա ն ի
Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
Գործազարության բաժին
N 06-215 01.10 2019թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԳԱՆՑԵՐ

ՏԵԼԵԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ

ՔՅ. ք. եր ան, 0047, Ա. Արմենակյան 127, հեռ.՝ +374 (11) 59 12 01, +374 (11) 59 12 00


№ 192828
«31» 05 20 ՁԲ
Ձեր _____

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ պարոն Ս. Սիմոնյանին

Հարգելի պարոն Սիմոնյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ Գեղարքունիկի մարզի, Սևան քաղաքի (թերակղզու հատված) տարածքում նախատեսվող <<Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22 կՎտ էլետրամատակարարման>> օդային գիծը ներառված է "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲ ընկերության հաշվեկշռում :

Անհրաժեշտության դեպքում՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ, տեղադրվող հենասյունները /որպես ոչ հիմնական կառույց/ կապամոննտաժվեն և կտեղափոխվեն ընկերության կողմից:

 **Գրիգորյան**

Կատարող՝ Կ. Մովսիսյան
Հեռ. 010 59-12-21